



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԴԱՐԱԿԱՆՑԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԴԱՐԱԿԱՆՑ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՁՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Սարդարապատ համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը տեղի ունեցավ 2019 թվականի փետրվար 5-ին համայնքապետարանի դահլիճում մասնակցությամբ՝ Արմավիրի մարզի ՏԻՄ ղեկավար Արսեն Ղուկասյանի և Սարդարապատ համայնքի բնակիչների :

2019 թվականը մեր համայնքի համար նվիրական էր, քանի որ լրանում էր Հայաստանի առաջին Հանրապետության և Սարդարապատի հերոսամարտի 100 ամյակը: Հաշվի առնելով, որ այդ տարելիցը բոլոր Սարդարապատցիների համար նվիրական էր, ուստի համայնքի ավագանու և ազգաբնակչության հետ միասին որոշեցին արժանավայել ներկայանալ այդ տարելիցին և այդ կապակցությամբ որոշվեց համայնքի մուտքի հատվածում կառուցել մետաղական կոնստրուկցիայով խաչ և օրգանական ապակիներով լուսադիտոյին լուսավորությամբ << Սարդարապատ >> անվանումը տառերով:

Առաջ անցնելով ուզում եմ տեղեկացնել, որ այդ աշխատանքները կատարվեցին շատ որոկով և ժամանակին: 2018 թվականի մայիսի 26-ին տեղի ունեցավ խաչի օրհնման և բացման տոնական միջոցառումը, որը ուղեկցվեց գյուղի եկեղեցու բակում մատաղի արարողությամբ և ճաշկերույթով: Ներկայումս համայնքի մուտքի հատվածում վեր է խոյանում 19 մետրանոց խաչը և 12 մետրանոց անվանացուսանակը, որը ավելի գրավիչ է դարձնում գյուղի

համայնապատկերը: Նշված բոլոր աշխատանքները ֆինանսավորվել են ամբողջապես համայնքի բյուջեյից և կազմել է ավելի քան 25.0 միլիոն դրամ :

Գյուղատնտեսության համար տարին բարեհաջող չէր ` նախ վաղ գարնանային ցրտահարությունը , հետո օգոստոսի 10-ին տեղացած կարկտահարությունը զգալի վնաս հասցրեցին գյուղացիական տնտեսություններին, որն էլ ազդեց նրանց ընդհանուր եկամուտների վրա: Այդ էր պատճառը, որ վերջին տաս տարիների ընթացքում առաջին անգամ թերակատարվեց համայնքի բյուջեն: Չնայած նշված անբարենպաստ պայմաններին համայնքում իրականացվել են համայնքի ավագանու կողմից նախատեսված և հաստատված ծրագրերը , որը իրականացվել է համայնքապետարանի խնայողությունների և ճիշտ ֆինանսատնտեսական գործունեություն ծավալելու շնորհիվ մասնավորապես .

1. Ամբողջ տարվա ընթացքում իրականացվել է ազգաբնակչության կողմից կուտակված կենցաղային աղբի անվճար տեղափոխությունը:
2. Կազմակերպվել է ազգաբնակչությանը անխափան խմելու ջրի մատակարարումը և ժամանակին ներքին ցանցի խափանումների և վթարների վերականգնումը:
3. Իրականացվել է համայնքի 1-ին , 2-րդ , 3-րդ , 4-րդ , 6-րդ , 10-րդ , 11-րդ , 12-րդ , 13-րդ և 14-րդ փողոցների գիշերային լուսավորման աշխատանքները ավելի քան 3500մ ընդհանուր երկարությամբ:
4. Նույնպես համայնքի բյուջեյի միջոցներով կատարվել է Արցախում զոհված համայնքի բնակիչ Արարատ Վաչիկի Խանոյանի հուշաքարի և տարածքի բարեկարգման , ինչպես նաև մեծարման ցերեկույթի անցկացումը:
5. Գարնանը վերանորոգվել է գյուղամիջյան և դաշտամիջյան որոշ ճանապարհներ, իսկ եկեղեցու և դպրոցի ճանապարհները ասֆալտապատվել են:
6. Ֆինանսավորվել են նաև համայնքում ավանդույթ դարձած նոր ծնված երեխաներին և ՀՀ բնակից ժամկետային ծառայությունից զորոցրվածների 50000 ական ՀՀ դրամ պարգևավճար հատկացնելը:
7. Համայնքի ավելի քան 110 սոցիալապես անապահով բնակիչների ընտանիքների հատկացվել է տարբեր չափի ֆինանսական օգնություն:
8. Ըստ նախնական ձեռք բերված պայմանավորվածության իրականացվել է գյուղի դպրոցի մարզադաշտի տարածքի մաքրման հողերի տեղափոխման , վերանորոգման, գույքի ձեռք բերման որոշուկի աշխատանքներ: 2018

թվականի հոկտեմբեր ամսից համայնքում գործում է ֆուտբոլի մանկական երկու խմբակ:

Ապրիլից վերաբացվեց գյուղի մանկապարտեզը ուր հաճախել է 120 երեխա , որոնց համար կազմակերպվել է ինչպես խնամքի և սննդի այնպես էլ զվարճալի միջոցառումներ: Հաշվետու տարում հրավիրվել և անցկացվել է տասն ավագանու նիստ , որում կայացվել է 59 տարբեր բնույթի որոշումներ: Համայնքում 2018 թվականի ընթացքում ծնվել է 56 երեխա , մահացել 46 բնակիչ:

Համայնքապետարանում իրականացվել է բնակիչների ամենօրյա ընդունելություններ, ավելի քան 3000 բնակչի տրամադրվել է տեղեկատվություն, կատարվել է խորհրդատվություն, քաղաքացիների կողմից բարձրացված հարցերին տրվել են լուծումներ, շուրջ ` 1800 բնակիչների տրվել են գրավոր պատասխաններ:

Ավագանու 2018 թվականի վերջին նիստին նախատեսվել և հավանության է արժանացել 2019 թվականի աշխատանքային գրաֆիկը և համայնքի առաջիկա տարվա զարգացման պլանը : Մասնավորապես 2019 թ-ին առաջնահերթությունը տրվել է` խմելու ջրի ներքին ցանցի բարեկարգման , մանկապարտեզի մասնաշենքի վարանորոգման և գույքի ձեռք բերման, դպրոցի մարզադաշտի նորոգման և գույքի ձեռք բերման ծրագրերի իրականացմանը: Հաշվետու տարում համայնքապետարանը պարտքեր չունի ինչպես աշխատավարձի գծով այնպես էլ մյուս կազմակերպություններին և անհատ ձեռներեցներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Բ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

